Տեղեկանք

Սույնով տեղեկացվում է Ձեզ առ այն, որ ՀՀ ԱՎԾ-ՊԸԾՁԲ-2017/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգի շրջանակում 51-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ֆ/Ա Հրաչ Թումասի Սեթոյանը, ով պարզեցված ընթացակարգին մասնակցության դիմումով ներկայացրել է իր անձնագրի տվյալները: Վերոնշյալ ընթացակարգի շրջանակում, համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի, ՀՀ ԱՎԾ-ն հարցումն ուղարկել է նաև Ashkhen_Papoyan@taxservice.am հասցեին: Ի պատասխան հարցմանը ՀՀ ԱՎԾ-ն տեղեկացել է, որ անհրաժեշտ տեղեկատվությունը կարող է տրամադրվել մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը ներկայացնելու դեպքում: Այնինչ մասնակիցը հանդիսանում է ֆիզիկական անձ և ընթացակարգի շրջանակում ՀՎՀՀ չի ներկայացրել, այլ ներկայացրել է անձնագրային տվյալները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է Ֆ/Ա Հրաչ Թումասի Սեթոյանին ճանաչել ընտրված մասնակից: ՀՀ ԱՎԾ-ի և Ֆ/Ա Հրաչ Թումասի Սեթոյանի միջև ս.թ. մայիսի 10-ին կնքվել է թիվ ՀՀ ԱՎԾ-ՊԸԾՁԲ-2017/2-2 ծածկագրով պայմանագիրը:

Գնումների գործընթացի կազմակերպման
և տնտեսական բաժնի պետ Է. Գրիգորյան

15.05.2017թ.